

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեննել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. Ա. ԲԵՐԼԵԱՆԴ

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ
ԴԺԲԱԽՏ ԴԵՊՔԵՐՈՒՄ
ՅԵՎ ԹՈՒՆԱՎՈՐՎԵԼԻՄ

336/3

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1931

3906

20 JUL 2010

01.03.2013

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ՎՈՐ ՊԵՏՔ Ե ԿԱՏԱՐԵԼ ԱՌԱՋԻՆ
ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՑՆԵԼԻՍ

1. Դժբախտ ղեպքերում, յերբ պահանջվում ե քժշկական ոգնություն, ամենից առաջ հարկավոր ե հոգալ, վոր քժիշկ կանչվի: Ցեղե քժիշկը իսկույն չի կարող գալ դժբախտության տեղը, հարկավոր ե զնասվածին հասցնել առաջին ոգնություն և անմիջապես ուղարկել նրան մոտակա բուժարանը:

2. Առաջին ոգնությունը պետք ե հասցնի ամեն մարդ, ով կարող ե անել այդ: Առաջին ոգնությունը պիտի ղեկավարի մի մարդ, մյուսները ոգնում են նրան, գործում են նրա ցուցմունքներով, առանց իրարանցման և անոգուտ խորհուրդների:

Уполн. главлита № В-188

Заказ № 998

Тираж 10.000

Книжная ф-ка Центриздана Народов СССР. Москва,
Шлюзовая набережная, 10.

3. Առաջին ոգնությունը հասցնելուց առաջ պետք է պարզել աղետի բնույթն ու պատճառը և հեռացնել վնասվածին վտանդավոր տեղից:

4. Վնասվածին պետք է պառկեցնել հարմար ու հանդիսադրությամբ:

5. Բացել հագուստի սեղմող մասերը. գոտին, ոճիքը և այլն:

6. Մշտապես պետք է աչքի առաջ ունենալ, վոր անզգույշ ու անհմուտ գործողություններով վնաս չհասցվի հիվանդին:

7. Վոչ մի ժամանակ չլվանալ վերքը ջրով և արյունհոսությունը դադարեցնելու նպատակով չկեղտոտել վերքը զանազան միջոցներով (սարդոստայնով և այլն):

4

ԱՐՅՈՒՆՀՈՍՈՒԹՅՈՒՆ ԹՇԻՑ ԿԱՄ ՇՐՅՈՒՆՔԻՑ

1. Սեղմել վզի զարկերակը ներքելի ծնոտի ծայրի մոտ (նկ. 1) և պահել այդպես մինչև արյունհոսության դադարելը:

2. Յերբ արյունհոսությունը դադարի, վերքի շուրջը յոդ քսել և կապել:

3. Թշի վրա կապ դնելու համար ամենից հարմար և ոգտվել յեռանկյունի գլխակապով (կասինկայով), վորի ծայրերը կապել գլխի վրա:



նկ. 1.



նկ. 2.

5. Քթարմատի և յերեսի վրա դնել սառն թրջոց, սառույց և այլն:

ԱՐՅՈՒՆՀՈՍՈՒԹՅՈՒՆ ՔԲԻՑ

1. Հիվանդին նստեցնել և առաջարկել, վոր գլուխը մի քիչ յետ պահի:

2. Մինչև արյունհոսության դադարումը հիվանդը պիտի խուսափի ամեն տեսակ շարժումներից. չփռշտա, քիթը չմաքրի, հանգիստ ու խոր շունչ քաշի:

3. Հազուստը բացել (*ոճիքը, գոտին, կապած տեղերը*):

4. Սեղմել մատներով քթածակերը 5—20 բոպեյով (նկ. 2):

ԱՐՅՈՒՆՀՈՍՈՒԹՅՈՒՆ ՔԲԻՑ

6. Արյուն արձակող քթածակը փակել մարլիյով կամ պատրույքի ձև տված մաքուր շորի կտորով այնպես, վոր յերբ արյունհոսությունը դադարի, հեշտ լինի դուրս հանել այն:

Քթածակերի մեջ բամբակ չի կարելի մտցնել, վորովհետև նրա կտորները կարող են մնալ այնտեղ և անցնել քիթի խորքը:

ԱՐՅՈՒՆՀՈՍՈՒԹՅՈՒՆ ԿՐՆԱՏԱԿԻՑ ՅԵՎ ԱՆՐԱԿԻ ՏԱԿԻՑ

1. Սեղմել վորչափ կարելի յեւմեղ անրակի տակի զարկերակը ցած՝ դեպի առաջին կողը (նկ. 3) և պահել մինչև արյունհոսության դադարումը:



նկ. 3.

[Արյունհոսությունը՝ դադարելուց՝ հետո պետք են վերքի շուրջը յոդ քսել և բինտով փաթաթել։

2. Կոնատակից արյուն հոսելու դեպքում կապելու համար պետք են վերցնել մեկ կամ յերկու չբացած բինտ և կամ զլանաձև փաթաթած թաշկինակ, դնել վերքի վրա, իջեցնել ձեռքը ու հետո փաթաթել ուսը կրծքի վանդակի ուղղությամբ։

ԱՐՅՈՒՆՀՈՍՈՒԹՅՈՒՆ ՄԵԶՔԻՑ

ԿԱՄ ԿՐԾՔԻՑ

1. Սեղմել արյուն հոսող տեղը մարմիյով, կամ մաքուր թաշկինակով, անձեռնոցիկով, յերեսսրբիչով (նկ. 4) և պահել մինչև արյունհոսության դադարելը։




նկ. 4.

1. Ցերբ արյունհոսությունը՝ դադարի, յոդ քսել վերքի շուրջը և կապել։ Կրծքի վերքը ծածկում են մաքուր մարմիյով և փաթաթում են կասինկայով, վորի ծայրերը կապում են մեջքին։ Մեջքի վերքը նույնպես ծածկում են մաքուր մարմիյով և կապում կասինկայով, վորի ծայրերը պնդացնում են կրծքին։

ԱՐՅՈՒՆՀՈՍՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔԻ ԴԱՍԱԿԻՑ


1. Բարձրացնել արյուն հոսող ձեռքը վերև (նկ. 5)։

2. Ցերբ արյունահոսությունը՝ դադարի, վերքի շուրջը յոդ քսել և կապել։



նկ. 5.

3. Ավելի հարմար ե կապել դաստակը կա-
սինկայով: Կասինկան պետք ե դնել այն-
պես, վոր նրա մեջտեղի ծայրը
ընկնի դաստակի յետել և
ապա մյուս ծայրերը
կապել ձեռքի
շուրջը:



1. ա) Առաջին միջոցը: Մատ-
ներով ամուր սեղմել թևի զարկե-
րակը (նկ. 6), պահել այդպես,


նկ. 6.

10

չնեռացնելով մատները, մինչև վոր արյունհոսությունը կդա-
դարի, այնուհետև վերքի շուրջը յոդ քսել և փաթաթել:
բ) Եերկրորդ միջոցը: Ուսից ցած դնել սեղման յերեսսրբի-
չից, թաշկինակից, թուկից, շատ պինդ չկապել նրանց ծայ-
րերը, վորոնց մեջ մըտ-
ցնել մի կտոր փայտ և
զգուշությամբ վոլորել
մինչև ամրանալը, արյան
դադարելը, (նկ. 7):

Սեղմանը պահել 1—2
ժամից վոչ ավելի, այ-
լապես մարմնի (ներկա-
դեպքում՝ ձեռքի) վերջա-
վորությունները կարող են անզգայանալ: Անհապաղ պետք ե
կանչել բժիշկ կամ հիվանդին տանել նրա մոտ: Նախաբաղուկի
վրա սեղման դնել չի կարելի:

նկ. 7.



11

2. Վիրավորված նախաբաղուկը պետք ե փաթաթել բինտով։ Բինտի առաջին յերկու ողակները դնում են իրար վրա, իսկ հետագա ողակները անում են այն ձևով, վոր նրանցից ամեն մեկը ծածկի նախընթացների մի քառորդը։

ԱՐՅՈՒՆՀՈՍՈՒԹՅՈՒՆ ՌԻՄԻՑ

1. Դնել ուսի վրա, արյունհոսության տեղից բարձր, սեղման՝ յերեսսրբիչից, թոկից և այլն և վոչ շատ ամուր կապելով նրանց ծայրերը, մտցնել նրանց մեջ մի վորեե պինդ առարկա (փայտ) և, զգուշությամբ վոլորելով, պահել մինչև արյան դադարելը, բայց վոչ ավելի 2 ժամից (նկ. 7)։ Սեղմանը դնելուն պես վնասվածին պետք ե ուղարկել բժշկի մոտ։

2. Յերբ արյունհոսությունը դադարի, վերքի շուրջը յոդ քսել և հետո փաթաթել։

3. Վիրավորված ուսը կարելի յե փաթաթել բինտով (տես նախաբաղուկի արյունհոսությունը) կամ յերկու կասինկայով։ Մի կասինկան աղատ կապում են վզին, մյուսի ծայրերով ծածկում են ուսը վերքից ցած և հանգույցով կապում են ուսի դրսի կողմում։ Յերկրորդ կասինկայի ծայրը վերեխից մտցնում են առաջինի տակը և ամրացնում անգլիական գնդասեղով։ Վիրավորված դաստակը կամ բազուկը պետք ե դնել այդ փաթթոցի մեջ։


ԱՐՅՈՒՆՀՈՍՈՒԹՅՈՒՆ ԿՐՈՒՆԿԻՑ ԿԱՄ ՎՈՏԱՏԱԿԻՑ

- Վնասված վոտը բարձրացնել։
- Յերբ դադարի արյան հոսումը, վերքի շուրջը յոդ քսել և փաթաթել։

ԱՐՅՈՒՆՀՈՍՈՒԹՅՈՒՆ ՄՐՈՒՆՔԻՑ

- Բարձրացնել վոտը և ազդրի վրա դնել սեղման յերեսսրբիչից, թոկից, թաշկինակից և այլն։ Կապելով իրարու սեղմանի

ծայրերը վոչ շատ ամուր, մացնել նրանց մեջ մի յերկար պինդ առարկա (փայտ) և դանդաղ ու զգուշությամբ վոլորել-ամրացնել մինչև վոր արյունը կղաղարի (նկ. 8):



Նկ. 8.

Սեղմանը աղղոթի վրա 2 ժամից ավելի պահել չի կարելի, այլպես սեղմանից ներքև գտնվող վոտի մասը կարող է մահանալ-անզգայանալ: Դրա համար ել հարկավոր է իսկույն կանչել բժշկին, կամ հիվանդին տանել բուժարան:

Սըռնքի վրա չի կարելի սեղման դնել:


Վերքը պետք է փաթաթել բինտով:

2. Բինտի առաջին յերկու ողակները ընկնում են իրար վրա, իսկ հետագա ողակներից ամեն մեկը պետք է ծածկե նախընթացի մեկ քառորդաչափը:

ԱՐՅՈՒՆՀՈՍՈՒԹՅՈՒՆ ԱԶԴՐԻՑ

1. Արյունահոսությունը կարելի յե կանգնեցնել յերկու միջոցով:

ա) Զեռքի մատներով ամուր սեղմել աճուկը (պահ) և, չհեռացնելով մատները, պահել մինչև արյան դաղաբումը (նկ. 9):



16

բ) Դնել սեղման արյունհոսության տեղից բարձր (տես «Արյունհոսություն սրունքից», (նկ. 8));

2. Ցերբ արյունը դադարի, յոդ քսել վերջի շուրջը և փաթաթել:


*1007
3619* 3. Բինտը պետք է սկսել փաթաթել ներքեւից և հետզհետեւ անցնել դեպի վեր: Բինտի առաջին յերկու ողակները ընկնում են իրար վրա, իսկ հետագա ողակներից ամեն մեկը պետք է ծածկե նախընթացի մեկ քառորդաչափը:

ԱՐՅՈՒՆՀՈՍՈՒԹՅՈՒՆ ԱԿԱՆՁԻՑ

1. Պառկեցնել հիվանդին:

2. Դնել արտաքին ականջափողի մեջ մարմիսի փոքրիկ կտոր, մեջը մի քիչ բամբակ, բայց պինդ յեվ խոր չկոխել ականջի մեջ:

2-998



17

3. Դնել մասված տեղի վրա ուղղինի պարկ (փուչիկ) սառցով լի:

4. Հիվանդին բոլորովին հանգիստ թողնել,
Չի կարելի լվանալ ականջը!

ՎՈՍԿՈՐՆԵՐԻ ԿՈՏՐՎԵԼԸ

Վոսկորների կոտրվելը իմացվում ե հետևյալ նշաններից։


1. Զգացվում ե ցավ, կոտրված տեղի շուրջը գոյանում ե
ուռուցք։

2. Կոտրված մասի վերջավորության աննորմալ շարժունություն, վերջավորությունների կախ ընկած դրություն։

3. Ակներև ջարդվածքի ժամանակ վոսկորի ծայրերը յերեւ
վում են դրսից կամ նկատվում են վերքի ներսում։

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱԲԱԶՈՒԿԸ ԿՈՏՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

1. Հանել հագուստը սկզբում առողջ ձեռքից և ապա՝ մասված ձեռքից։ Ավելի լավ ե հագուստի թևի կարը կտրատել։



Նկ. 10

2. Դնել չշարժվող փաթթոց, բեկակալ շինից, ջորդանից (յելօն), փայտից, տախտակից և այլն, վորպեսզի վուկորի կտորտանքները անշարժ մնան:

Շիները պիտի լինեն այնչափ յերկար, վոր կարողանան իրենց մեջն առնել յերկու հոդ (խաղ). մեկը կոտրված տեղից բարձր, մյոււը՝ ցած, արմունկի և դաստակի հոդերը:

Նախաբազուկի վրա չշարժվող փաթթոց դնելու համար հարկավոր ե կոտրված ձեռքը թեքել արմունկի

հողով (նկ. 10): Յերկու հոգի պետք ե պահեն կոտրված ձեռքը, թեթև քաշելով բազուկը դեպի արմունկն ու դաստակը, իսկ յերբորդը այդ ժամանակ փաթթում ե ամբողջ ձեռքը բամբակով կամ քուքով (պակլя), դնում ե շիները և ամուր կապում:

3. Փաթթաթած ձեռքը պետք ե կախել ուսից կապով:

4. Հիվանդին իսկույն ուղարկել մոտակա հիվանդանոցը:


Յեթե ջարդվածքը բաց ե, այդ դեպքում պետք ե ի նկատի ունենալ հետեւյալը.

ա) վերքը չպետք ե, լվանալ՝ հարկամոր ե միայն զգուշությամբ վերքի վրայից առնել կեղտը մաքուր դանակով, վորը նախապես անհրաժեշտ ե կրակի վրա շիկացնել և ապա հովացնել.

բ) կապել փաթթոցով.

գ) ուժգին չձգել (քաշել) մարմնի վերջավորությունները, դնել շիները և իսկույն ուղարկել հիվանդին բժշկի մոտ:

Անզգուշ ձգելուց կարող ե մեծ վնաս առաջանալ:



Նկ. 11.

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍԸ ԶԱՐԴՎԵԼՈՒ ԴԵԹՔՈՒՄ


1. Հանել հագուստը առաջ առողջ թերից և ապա՝ հիվանդ։
2. Կոտրված ձեռքը ծալել արմունկի հողով։

Մի մարդ պետք է կոտրված ձեռքը ձգի դեպի ինքը և ցած, իսկ մի ուրիշը թեթև փաթաթելով վերքը (յեթե կա վերք) պետք է ամբողջ ձեռքը չորս կողմից ծածկե բամբակով, քուքով և դնի շիները նրանց վրա (նկ. 11). Շիները ամուր սեղմում են ձեռքին, իսկ ապա զսասված ձեռքի հետ միասին՝ կրծքի վանդակին։

3. Շիները պետք է այնքան յերկար լինեն, վոր ընդգրկեն ուսի և արմունկի հողերը։
4. Հիվանդը իսկույն պիտի ուղարկվի հիվանդանոց։

ՄՐՈՒՆՔԻ ԶԱՐԴՎԱԾՔԸ

1. Վնասված վոտից վոտնամանը հանել։ Ավելի լավ է կոշիկի ճիտքի կարը կտրատել։
2. Դնել անշարժ փաթթոց շինից, ջորդանից, տախտակներից, վորպեսզի վոսկորի կտորտանքները անշարժ մնան։
3. Շիները պիտի լինեն այնչափ յերկար, վոր ընդգրկեն ծունկի և սրունքի հողերը։
4. Փաթթոցը սրունքի վրա դնելու համար ոգնողներից մեկը ձախ ձեռքով բռնում է կրունկը, իսկ աջով վոտքի թաթը



նկ. 12.

յետևից և դեպի իրեն ե ձգում հիվանդի վոտը, իսկ յերկրորդ ոգնողը յերկու ձեռքով բռնում ե ազդը և պինդ պահում (նկ. 12):

Այդ ժամանակ յերրորդը թեթև փաթաթելով վերքը (յեթե կա վերք), ծածկում ե սրունքը բամբակով ու ամրացնում ե շիները:

5. Հիվանդը իսկույն պիտի ուղաբեկվի մոտիկ հիվանդանոց:

ԱԶԴՐԻ ԶԱՐԴՎԱԾՔԸ

1. Ազատել մնասված վոտը կոշկից և հագուստից, կտրատելով շարվարը, վարտիքը և կոշիկը:

2. Դնել անշարժ փաթթոց շիներից, ջորդանից և տախտակներից, ըստ վորում պետք ե դնել յերկու շին. մեկը դըսից, վոտի դրսի կողմով և մյուսը՝ ներսի կողմով:

3. Դրսի շինը պետք եւ հասնի մինչև կռնատակը, իսկ ներսինը՝ մինչև աճուկը (ոախ). ցածրում յերկու շիներն ել պետք եւ վոտից 10—15 սանտիմետր յերկար լինեն:

4. Ազդրի վրա անշարժ փաթթոց դնելու համար ոգնողներից մեկը ձախ ձեռքով բռնում ե կրունկից, իսկ աջով թաթից և ձգում ե հիվանդի վոտը իրեն և մի քիչ դեպի դուրս, մյուս ոգնողը առնում ե հիվանդին թևերի տակից և պահում ե նրա մարմինը անշարժ դրության մեջ, իսկ յերրորդը այդ ժամանակ կապկապում ե վերքը (յեթե կա վերք), ամբողջ վոտը ծածկում ե բամբակով, դնում ե շիները և ամուր կապում (նկ. 13):

5. Վերևից դրսի շինը պիտի կապել կրծքին, իսկ վսասված վոտը շիների հետ միասին պիտի կապվի առողջ վոտին:



Նկ. 13.



Նկ. 14.

6. Հիվանդը իսկույն պիտի ուղարկվի մոտիկ հիվանդանոցը պատգարակի վրա կամ սայլով, վորը պիտի ունենա փափուկ փռվածք (դարմանից, չոր խոտից, զգեստներից, վերմակից, բարձերից):

ՆԵՐՔԵՎԻ ԾՆՈՏԻ ԶԱՐԴՎԱԾՔԸ

1. Դնել փաթթոց 2 կասինկայից (նկ. 14):
2. Ուղարկել հիվանդին բուժարան:

ԱՆՐԱԿԻ ԶԱՐԴՎԱԾՔԸ

1. Յերեսսրբիչով կապում են վասագած կողմի ուսը և քաշում են դեպի յետ (նկ. 15), վորից հետո կապելով յերեսսրբիչը, ինչպես յերեսում են նկարից, ամուր կապում են մյուս ուսի վերին մասում (մի յերրորդաչափ). Զեռքերը թեքում են արմունկների մոտ և քիչ յետ քաշում:



Նկ. 15.



Նկ. 16

Մեջքի և յետ քաշած ձեռքերի
մեջ անց են կացնում փայտ և
ամրացնում (Նկ. 16):

2. Վնասվածին իսկույն պիտի
ուղարկել հիվանդանոց:

ԿՈՂԵՐԻ ԶԱՐԴՎԱԾՔԸ

1. Խորը արտաշնչելուց հետո
կրծքի վանդակը ամուր կապել լայն
բինտով. կարելի յե նաև յերեսսրբի-
չով, կարելով ծայրերը թելով, կամ
պնդացնելով անգլիական գնդասե-
ղով:

2. Վորպեսզի փաթթոցը ցած
չընկնի, նրա մի քանի ողակները
տանում են ուսերի վրայով (Նկ. 17):

3. Ուժեղ ցավեր զգալիս պետք ե
ղնել սառցով լի պարկ կրծքի վրա:

4. Հիվանդին իսկույն ուղարկել
բժշկի մոտ:



Նկ. 17

ՎՈՍԿՈՐԸ ԴՈՒՐԸ ԸՆԿՆԵԼՈՒ ՆՇԱՆՆԵՐԸ

1. Հողի (խաղ) ձեփ վոփոխությունը:
2. Դուրս ընկած վերջավորությունը լինում ե անշարժ, զգացվում ե ցավ, հողը ուռչում ե:

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՎՈՍԿՈՐԸ ԴՈՒՐԸ ԸՆԿՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

1. Զպետք ե փորձել վոսկորը տեղը զցել:
2. Հարմար տեղավորել վնասված վերջավորությունը, յեթե ձեռքն ե՝ կախել կասինկայով, յեթե վոտքն ե՝ դնել բարձի վրա, վորը պիտի գտնվի յերկու փափուկ մութաքաների մեջ:
3. Վնասվածին հարմար ձեռվ պառկեցնել պատգարակի վրա և կամ, յեթե կարող ե նստել, նստեցնել սայլի վրա և ուղարկել հիվանդանոց:

ՎՆԱՍՎԱԾԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Վնասվածին ավելի լավ ե տանել պատգարակի վրա: Վորպես պատգարակ կարող են ծառայել սանդուղքը, դռները, նողեր՝ հարմարեցրած թոկերով և այլն:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՀԻՎԱՆԴԻՆ ՅԵՎ ՏԵՂԱՎՈՐԵԼ
ՊԱՏԳԱՐԱԿԻ ՎՐԱ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԱՏԳԱՐԱԿԻՑ ՏԵՂԱՓՈԽԵԼ
ՄԱՀՃԱԿԱԼԻ ՎՐԱ

1. Ծանը վնասվածին գետնից բարձրացնում են յերեք հոգի: Նրանք կանգնում են հիվանդի մի կողմում: Մեկը ձեռքը տանում ե ուսի և մեջքի տակը, մյուսը մեջքի և նստատեղի տակը և յերրորդը ծնկների և սրունքների տակը:
2. Յերեքն ել տված հրամանի համաձայն զգուշությամբ բարձրացնում են հիվանդին և մի քիչ դեպի իրենց զցում նրան:

3. Հետո նույնպես տված հրամանի համաձայն մնասվածին դանդաղ ու զգուշությամբ իջեցնում են պատգարակի վրա մարմնի առողջ կողմով դեպի վար:

4. Հիվանդին պատգարակի վրա դնելիս կամ իջեցնելիս պետք ե մնասված մասը առանձին ուշադրությամբ և զգուշությամբ տեղավորել:

ՊԱՏԳԱՐԱԿԻ ՎՐԱ ՏԱՆԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿԸ

1. Հարթ տեղով անցնելիս պետք ե տանել հիվանդին վոտները դեպի առաջ:

2. Սանդուղքներով բարձրացնելիս կամ սարը բարձրանալիս պետք ե հիվանդի գլուխը առաջ պահել:

3. Սանդուղքներից կամ սարից իջնելիս հարկավոր ե հիվանդին տանել վոտները առաջ պահած և միայն վոտները կոտրված դեպքում առաջարկվում ե սարից կամ սանդուղքներից իջնելիս հիվանդի գլուխը առաջ պահել:


4. Պատգարակը տանողները պետք ե այնպես զգուշությամբ քայլեն, վոր ցնցումներ քիչ լինեն:

ՎՆԱՍՎԱԾԻՆ ՏԱՆԵԼՈՒ ԱՅԼ ՅԵՂԱՆԱԿՆԵՐ

1-ին յեղանակը:

1. Հիվանդի համար հարմար նստվածք ե ստացվում, յերբ շալակողները սկզբում՝ բռնելով իրենց ձախ ձեռքով հենց իրենց աջ ձեռքը, հետո բռնում են աջ ձեռքով մյուսի ձախ ձեռքը (նկ. 18):

2. Նստած դրությամբ տանելը թույլատրվում ե միայն փոքրիկ տավանդին վոտները և միայն փոքրիկ տարածությունների համար:



Նկ. 18

2-րդ յեղանակը:

1. Մի տանող մտնում ե հիվանդի վոտների արանքը և բարձրացնում ե նրան ծնկներից, իսկ մյուսը վերցնում ե նրան յետեկից, միացնելով ձեռքերի մատները հիվանդի կրծքի վրա (նկ. 19):

2. Զգուշությամբ բարձրանալով, շալակողները հանգիստ տանում են հիվանդին:


3. Այդ յեղանակով կարելի յե տանել հիվանդին, յեթե վոտների կամ կողերի վոսկորները ջարդված չեն:

3-րդ յեղանակը:

1. Հիվանդը նստում ե դոտուց, յերեսսրբիչից կամ պարանից շինած ողակի վրա:

Յերկու հոգի կանգնում են հիվանդի կողքերում և, բարձրացնելով ողակը, տանում են հիվանդին:

3. Հիվանդը իր ձեռքերը դնում ե տանողների ուսին:



Նկ. 19

ՄԱԼՎԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

1. Դադարում ե սրտի բարախումը: Յերբ մոտեցնում ենք ականջը մասսվածի ձախ ծծին, չի լսվում սրտի զարկը: Ձեռքի ափը սրտի վրա դնելիս նույնպես չի զգացվում բարախումը:
2. Ծնչառության դադարումը: Յերբ մոտեցնում ենք հայելին բերանին, նա չի քրտնում, աղոտանում. մոմի բոցը, վոր մոտեցնում ենք քթին կամ բերանին, չի յերերվում:
3. Մկանների թուլացումը: Բարձրացրած ձեռքը ընկնում ե ինքն իրեն:
4. Աչքի բիբը չի փոխվում: Լույսը մոտեցնելիս բիբը չի նեղանում, իսկ մթության մեջ չի լայնանում:

5. Թելով ձեռքի մատը ամուր կապելիս չի նկատվում վոչ ջրգողություն և վոչ ել կարմրություն:

6. Դիակի ընդարմացումը: Մահից անմիջապես հետո թուլացած մկանները մի քանի ժամ անցնելուց հետո ընդարմանում, անզգայանում են:

7. Դիակին հատուկ բծեր: Մահից մի քանի ժամ անցած դիակի ցածի մասերում յերևան են գալիս բաց-վարդագույն բծեր, վորոնք հետզհետե մեծանում են ու սեանում:

Այն բոլոր դեպքերում, յերբ բացակայում են այստեղ բերած նշանները, — մենք գործ ունենք կարծեցյալ մահվան հետ:


ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԾԵՑՅԱԼ ՄԱԼՎԱՆ ԴԵՐՔՈՒՄ

1. Ներս թողնել թարմ ող: Հիվանդին շուռ տալ ողի հոանքի կողմը:

2. Բացել հագուստի սեղմող մասերը (ոճիք, գոտի, ժիլետ):
 3. Անմիջապես կիրառել արհեստական շնչառություն (տես հետագա գլուխները):
 4. Շփել քունքերը, ձեռքերը, վոտները (սրտի ուղղությամբ) յերեսսրբիչով:
 5. Հաճախ սառը ջուր շաղ տալ յերեսին և ամեն անգամ սրբել:
 6. Քթին մոտեցնել նաշատիրի սպիրտ, ողբեկոլոն, քացախ, բայց վոչ թե շնչ մեջ, այլ ցանելով մի քանի կաթիլ թաշկինակի վրա կամ ձեռքի ափին:
-


ԱՐԵՍՏԱԿԱՆ ՇՆՉԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԶԵՎԸ
(Հայ Սիլվեստրի)

1. Հագուստից բարձ շինել գլանակի ձևով և դնել հիվանդի մեջքի տակ:
2. Պետք ե հետևել, վոր լեզուն կախ չընկնի, Ավելի լավ ե բռնած պահել լեզուն ձեռքով՝ թաշկինակի կամ յերեսսրբիչի միջոցով:
3. Իջնել ծնկների վրա հիվանդի գլխի վերև, առնել նրա յերկու ձեռքերը արմունկից քիչ ցած և, հաշվելով «մեկ-յերկու», առանց շտապելու, բարձրացնել հիվանդի գլխի վերևը և ձգել դեպի ինքը (նկ. 20): Սպասել յերկու վայրկյան: Ապա հաշ-



U4. 20

42



U4. 21

43

վելով ռյերեք-չորս», հիվանդի արմունկները դարձնել դեպի
մարմինը և մոտ 2 վայրկյան սեղմել կողքերին (նկ. 21):

4. Այդ շարժումները (արմունկների ծալելն ու թեքելը)
կրկնել հանդիսաւ ու համաչափ 15—20 անգամ մի ըոպեյի մեջ,
մինչև հիվանդը կսկսի շնչել, իսկ դա կարող ե լինել նույնիսկ
մի քանի ժամից հետո:

5. Կենդանանալուց հետո տաքացնել հիվանդին, լայն հագ-
ցնել և տաք թեյ խմեցնել:

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՇՆՉԱՌՈՒԹՅԱՆ ՑԵՐԿՐՈՐԴ ԶԵՎԸ

(Հայ Շեֆթերի)

1. Հիվանդին պառկեցնում են փորի վրա, գլուխը շուռ են
տալիս այնպես, վոր քիթն ու բերանը ազատ լինեն:

2. Ազատողը իջնում ե ծնկների վրա հիվանդի վերելը և,
ուղղելով իր ձեռքերը, համաչափ սեղմում ե ներքին կողերը՝
հաշվելով «մեկ-յերկու» (նկ. 22):

3. Ապա ողնություն հասցնողը յետ ե քաշվում, քիչ ուղ-
ղվում ե, առանց ձեռքերը հեռացնելու (նկ. 23), 1—2 վայր-
կյան կանգ ե առնում և նորից շարունակում անել այն, ինչ
վոր ասված ե 2-րդ կետում:

4. Այդ շարժումները արվում են 15—20 անգամ մի ըո-
պեյի մեջ, մինչև վոր կվերականգնի բնական շնչառությունը,
վոր կարող ե լինել նույնիսկ մի քանի ժամից հետո:

Արհեստական շնչառությունը կարելի յե կիրառել մեր մատ-
նանշած ձևերից, վորով և կամենաք, բացի հետեւյալ դեպքերից.

ա) Ձեռքերի վոսկորները ջարդվելու դեպքում արգելվում ե
կատարել արհեստական շնչառությունը ըստ Սիլվեստրի, այլ
պետք ե ոգտվել Շեֆֆերի սիստեմով:

բ) Կողերի ջարդվածքի դեպքում չի կարելի գործադրել Շեֆ-
ֆերի սիստեմը, այլ պետք ե ոգտվել Սիլվեստրի յեղանակով:




fig. 22.





fig. 23.

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

1. Հիվանդին պառկեցնել այնպես, վոր նրա գլուխը մարմից ցած լինի։ Բարձրացնել հիվանդի վորտները (նկ. 24), բացել ոճիքը, գոտին։
2. Ներս թողնել թարմ ողի հոսանք։
3. Դնել հիվանդի ճակատին սառը ջրի մեջ թրջած մաքուր շորի կտոր։
4. Հոտ քաշել տալ նաշատիրի սպիրտ։ Ցեթե հիվանդը ուշքի չի գտ, կատարել արհեստական շնչառություն (տես նախկին գլուխները)։
5. Տալ զրգոիչ կաթիլներ ($20-30$ կաթիլ եֆիր-վալերիանի)։

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒԳԱՐՈՎ ԲՐՆՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

1. Անմիջապես մաքրել ողը. բացել պատուհանները, դռները,
2. Հիվանդին տանել ուրիշ սենյակ, վորտեղ ողը մաքուր ե, իսկ ամառը դուրս հանել բակը։



ՆԿ. 24

3. Գլուխը թրջել սառը ջրով, ճակատին դնել սառը թըրջոց: Կուրծքը, յերեսը սրսկել սառը ջրով: Նաշատիրի սպիրտալ հոտ քաշելու (կաթեցնել թաշկինակի վրա կամ իր ձեռքի ափին 2—3 կաթիլ և մոտեցնել հիվանդի քթին):

4. Կատարել արհեստական շնչառություն (տես նախկին գլուխները):

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԽԵՂԴՎՈՂԻՆ

1. Քաջալերել խեղդվողին, գոչելով՝ թե իսկույն կազատեն նրան, թե հարկավոր ե, վոր նա աշխատի ջրի յերեսին մնալ միայն 1—2 րոպե: Զգել խեղդվողին տախտակ, նստարան, սանդուղք, թոկ, սանձ, վորպեսզի նա կարողանա բռնելով այդ առարկաներից մեկնումեկը, մնալ ջրի յերեսին:

2. Ոգնության հասնողը պետք է մերկանա, իսկ յեթե ժամանակը չի ներում, գոնե պետք է հանի կոշիկները և վերևի հագուստը, դուրս թողնի գրպանները և ներքեւ գցի, ներքենի մասում վարտիքի թելերը բացել:



նկ. 25

3. Ազատողը պետք ե լողա դեպի խեղդվողը յետեից, զգուշանալով, վոր նա չբռնի իր ձեռքերից:



Նկ. 26

վողը սկսի կորցնել ուշքը, իրենից քիչ հրել նրան և ապա գրկել, ինչպես ասկած ե 4-րդ կետում:

4. Բռնելով խեղդվողի մազերից, հագուստից կամ ուսից, ազատողը լողում ե մեջքի կամ կողքի վրա, աշխատելով վոտներով (Նկ. 25),

5. Յեթե խեղդվողը փորձե բռնել ազատողի վզից, այդ դեպքում հարկավոր ե անհապաղ սեղմել ձեռքով խեղդվողի քիթը և բերանը (Նկ. 26), իսկ յերբ խեղդ-

6. Խեղդվողի տեղը վորոշվում ե ողի պղպճակներով, վորժամանակ առ ժամանակ յերեսում են ջրի յերեսին:

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԶՐԻՑ ՀԱՆԱԾԻՆ

1. Հենց վոր խեղդվողին հանեցին ջրից, պետք ե շտապով բացել և հանել կամ կտրատել նրա թաց հագուստը:

2. Իսկույն պառկեցնել խեղդվողին փորի վրա գլանակի ձևով դարսած հագուստի կամ հագուստով ծածկած գերանի վրա և մի քանի անգամ սեղմել ձեռքերով մեջքը:

Բացել խեղդվողի բերանը և ատամներն իրարուց հեռացնել:



Նկ. 27

Մաքրել քիթը և բերանը փրփուրից, կեղտից և աղմից՝ թաշկինակով ծածկված մատով (նկ. 27):

4. Դուրս քաշել հիվանդի լեզուն, բայց հետեւ, վոր չմսասվի: Չի կարելի խեղդվողին տարութերել, որորել, այլ հարկավոր ե գործ դնել արհեստական շնչառություն (տես նախկին գլուխները):

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՌԱԾԻՆ

1. Զգուշությամբ տանել սառածին մի ծածկված ցուրտ շնություն (նախասենյակ, սարայ):

2. Զգուշությամբ կտրատել ամբողջ հագուստը, առանց քաշելու այն:

3. Շփել ամբողջ մարմինը ձյունով, թրջած սառն յերեսորիչով, մինչև վոր մարմինը կղառնա ճկուն և կերևան կենդանության նշաններ:

4. Ցերը մարմինի վերջավորությունները կղառնան ճկուն, գործ դնել արհեստական շնչառություն (տես նախկին գլուխները):

5. Բնական շնչառությունը յերևալու դեպքում թույլ ե տրվում հիվանդին տեղավորել չափավոր տաքացրած սենյակ և այնտեղ շարունակել մարմինի շփումը շորի կտորով:

6. Տալ գրգորի կաթիլներ (եֆիր-վալերիանի):

ԱՐԵԳԱԿԱՅԻՆ ՅԵՎ ԶԵՐՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՎԱԾ

1. Դնել հիվանդին շվաքի տակ՝ գլուխը բարձր պահած:

2. Մերկացնել և ջուր ցանել վրան, շփելով մարմինը թըրած շորով:

3. Շնչառության բացակայության դեպքում կիրառել արհեստական շնչառություն (տես նախկին գլուխները):

4. Ցերը հիվանդը ուշքի գա, տալ նրան գրգորի կաթիլներ:

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԽՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

1. Գրկել կախվածի մարմինը, զգուշությամբ բռնելով և
թույլ չտալով վոր նա ընկնի, կտրել թոկը:
2. Հանել վզից թոկը և խսկույն կիրառել արհեստական
շնչ ռություն:


ԵՊԻԼԵՊՍԻԱ (ԸՆԿՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ)

1. Ուժով չդադարեցնել ջղաձգությունը:
2. Խնամել, վոր չընկնի և չփիրավորվի: Չոքել հիվանդի
զվահի մոտ, դնել նրա գլուխը իր ծնկների վրա և պահել (նկ. 28):
3. Բացել ոճիքը, թուլացնել հագուստը:
4. Աշխատել չանհանգստացնել հիվանդին և փորձեր չանել
ուշքի բերելու:




Նկ. 28

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԵԼԵՔՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՎՆԱՍՎԵԼՈՒ
ԴԵՊՔՈՒՄ



Նկ. 29

1. Կանգնեցնել տոկը
(ելեքտրական հոսանքը), ցած
քաշելով ռուբիլնիկը (նկ. 29):
2. Ցեթե ռուբիլնիկ չկա,
այն ժամանակ ոգնության
հասնողը անպատճառ ռեզինի
կրկնակոշիկներ հագած (ա-
ռանց մետաղե տառերի) և
ձեռնոցներով (կամ կարելի յե
ձեռքերը փաթաթել շորով)
ելեքտրական թելից հեռա-
ցնում-քաշում ե վնասվածին
(նկ. 30):



Նկ. 30



Նկ. 31

3. Կարելի յէ կանգնեցնել տոկը, հեռացնելով վնասվածի վրայից ելեքտրական թելը փայտով (նկ. 31): Դրա համար ոգնություն հասցնողը հազին պիտի ունենա կրկնակոշիկներ (առանց տառերի) կամ կանգնած լինի թղթի (լրագրական) կապոցի վրա:

4. Յեթե վնասվածը տոկը կանգնեցնելուց հետո գտնվի անզգա դրության մեջ և չշնչե, այդ դեպքում պետք ե համառեն գործ դնել արհետական շնչառություն:

ԱՅՐՎԱԾՔՆԵՐ

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՅՐՎԱԾՔ ՍՏԱՑԱԾԻՆ

1. Մարդու վրա այրվող հազուստը հանգցնելու համար ամենից լավը ե ձգել նրա վրա վերմակ, վերարկու, մուշտակ և այլն: Հետո այրվածի վրա ածել սառը ջուր:

2. Հազուստը և վունամանը հիվանդի վրայից չքաշել, այլ զգուշությամբ հանել, կտրտելով մկրատով: Մարմնին կպած հազուստի մասերը թողնել իրենց տեղը և միայն չորս բոլորը կտրտել մկրատով:

ԱԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՅՐՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՐՔՈՒՄ

1. Բոլոր այրվածքների ժամանակ, — կրակից թե յեռման ջեխց, — փաթաթել վնասված տեղը բինտով կամ մաքուր շորով, վորոնց, լավ կլինի, յեթե քսվի վաղելին, պրովանսալ կամ մաքուր կարագ յուղ:

2. Ուժեղ թթվուտով այրվելու դեպքում թրջել այրված տեղը սոդայի լուծվածքով, շաղախով, կրաջրով կամ սապնի ջրով և շաղ տալ վրան սոդա, ատամի փոշի:

Ծծումբի թթվուտով այրվելու դեպքում յերբեք չպետք ե դիմել ջրի ոգնության, այլ այրված տեղի վրա ածել սոդա, ճարպ քսել յեվ փաթաթել բինտով:

3. Ուտիչ գալիքար (պելօչ) այրվելու դեպքում պետք ե լվանալ վերքը ջրախառն քացախով կամ կվասով:

4. Զհանգցրած կրից այրվելու դեպքում մեծ քանակությամբ պետք ե ջուր ածել:

Այս բոլոր այրվածքների դեպում հիվանդները առաջին ոգնությունը ստանալուն պես պիտի ուղարկվեն բժշկի մոտ:

ԱԶԲԵՐԻ ԱՅՐՎԱԾՔԸ

1. Աչքերի այրվածքի դեպում անհրաժեշտ ե բինտով կամ մաքուր շորով փաթաթել աչքերը:

Բինտի առաջին ողակները տանել գլխի վրա, իսկ մյուս ողակներով կապել աչքը (նկ. 32):



Նկ. 32

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՌՈՒՅՑԻ ՃԵՂՔՎԱԾՔԻՑ ԶՐԻ ՄԵՋ ԸՆԿՆՈՂԻՆ

1. Ոգնություն հասցնողը պետք է կանգնի հաստ, յերկար տախտակի վրա և ձգի վնասվածին թոկ կամ փայտ։ Ավելի հարմար է ոդտվել սանդուղքից, վորի միջոցով նա կարող է մոտենալ խեղդվողին (նկ. 33):
2. Խեղդվողին ջրից հանելուց հետո տալ նրան գրգռիչ կաթիլներ (վալերիանի):

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԱԼԿՈԶՈԼԻՑ ԹՈՒՆԱՎՈՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

(արաղից, սամազոնից յեկ այլն)

1. Դուրս բերել թունավորվածին թարմ ողը։ Բացել հագուստը։
2. Սառը ջուր ածել վրան։



Նկ. 33

3. Խմեցնել՝ կես բաժակ ջրի հետ 5 կաթիլ նաշատիրի սպիրտ:

4. Շնչառության բացակայության դեպքում գործ դնել արհեստական շնչառություն (տես նախկին գլուխները):

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՆԿԻՑ ԹՈՒՆԱՎՈՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

1. Տալ փսխեցնող և լուծողական դեղ:

2. Տաքացնել մարմինը:

3. Տալ գրգռիչ կաթիլներ (վալերիանի կամ հոֆմանի 10—20 կաթիլ կես ըյումկա ջրի մեջ):

Քացախ չտալ:

ԿԱՏԱԼԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԾԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

1. Կապել վերքը:

2. Իսկույն հիվանդին ուղարկել բժշկի մոտ, վորը նրան կուղարկի պատվաստման (պաստերյան) կայանը:

Կատաղած կենդանիներից վնասվածները իրավունք են ստանում ճանապարհի ծախսը չվճարելու:

ՄԵՂՎԻ ԽԱՅԹՈՑԸ

1. Հեռացնել թույնը (խայթը, ասեղը):

2. Խայթած տեղի վրա ածել 1—3 կաթիլ նաշատիրի սպիրտ:

3. Դնել խայթած տեղի վրա սառը թրջոց 2—3 ժամվաընթացքում, փոխելով թրջոցը յուրաքանչյուր 5—10 ըոպեյում:

ՈՉԻ ԽԱՅԹՈՑԸ

1. Իսկույն կապել մարմնի վերջավորությունը սեղմանով վերքից բարձր (սրտին մոտիկ):

2. Այլել վերքը շիկացրած ածուխով կամ յերկաթով (մեխով), վորից հետո կապը արձակել:

Հիվանդին անհապաղ ուղարկել բժշկի մոտ:



Նկ. 34

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՆԱՎՈՐՈՂ ՆՅՈՒԹԵՐԻՑ ՎՆԱՍՎԵԼՈՒ ԴԵԹՔՈՒՄ

1. Թունավորող նյութերից մասմածին խկույն պետք է հեռացնել թունավորված մթնոլորտից և տանել մաքուր ողի մեջ։ Ոգնություն հասցնողը այդ դեպքում պետք է ունենա հակազային դիմակ։

2. Յեթե թունավորվածը չի կարող արագությամբ հեռացվել թունավոր մթնոլորտից, ապա նրան ամենից առաջ պիտի հագցնել հակազային դիմակ (Նկ. 34)։

3. Յեթե դիմակ չկա, այդ դեպքում թունավորվածի քիթը և բերանը ծածկում են թրջած յերեսսրբիչով, շապիկով և այլն, և ստիպում, վորնա շնչե թաց շորի միջով (Նկ. 35)։

4. Յեթե հոսուն թունավորող նյութի կաթիլները (որինակ՝ իպրիտի) ընկել են հագուստի կտմ մարմնի բաց մասերի վրա, — հագուստը պետք է հանել, աշխատելով չկպչել նրան բաց ձեռքերով, իսկ կաշվի վրայի կաթիլները հեռացնել փայտիկի ծայրին փաթաթած բամբակով (ինչպես հեռացնում են թանաքի կաթիլները, այսինքն վոչ թե քսմսելով), այլ փոխադրելով բամբակը փայտի վրա ամեն



69

Նկ. 35



Նկ. 36


անգամ կաթիլին դիպչելուց
հետո): Մաքրելով կաշին թու-
նավորող նյութի կաթիլից, հար-
կավոր ե խնամքով լվանալ մսա-
ված տեղը տաք ջրով և սապո-
նով մի քանի անգամ: Յեթե
ձեռքի տակ կա բենզին կամ կե-
րոսին, այդ դեպքում լվանալուց
առաջ մի քանի անգամ շփում են
մսասված տեղը բենզինով կամ
նավթով լավ թրջած բամբակով
(նկ. 36):

Մնայուն թունավորող նյու-
թերից մսասվածներին պետք ե
ոգնության գալ հակագաղային
դիմակով և ոեղինի ձեռնոցնե-

րով, իսկ ավելի լավ ե ունենալ
հատուկ պաշտպանող-ապահովող
զգեստ:

5. Հեղձուցիչ գաղերով թունա-
վորվածներին ոգնելու դեպքում
նրանց չեն թույլ տալիս ինքնա-
գլուխ յերթալ և ուժեղ շարժումներ
անել: Նրանց տանում են մոտիկ հի-
վանդանոցը կամ բուժարանը ձեռ-
քերի վրա, պատգարակով, կամ
հանգիստ կառքով (նկ. 37):

6. Արհեստական շնչառություն
կիրառում են միայն ուշաթափ
դրության մեջ գտնվողներին, ցիա-
նով թունավորվածներին (լեղակի թթվուտով, վոր դառն նշի
հոտ ունի) և ուզարով բռնվածներին:



Նկ. 37


Հեղձուցիչ նյութերից թունավորվածների վերաբերմամբ
արհեստական շնչառություն չի թույլատրվում:

7. Թունավորող նյութերից վնասվածներին ոգնելիս պիտի
հիշել, վոր թունավորումը յերբեմն արտահայտվում ե վոչ մի-
անգամից, այլ մի քանի ժամ անցնելուց հետո։ Վորպեսզի թու-
նավորման զարգացման առաջն. առնվի, բոլոր դեպքերում ոգ-
նություն հասցնելիս պետք ե գործել արագությամբ ու վճռա-
կանապես։


8. Թունավորող նյութերի մթնոլորտով վարակված հա-
զուստը պահում ե (կլանում ե) իր մեջ թունավորող նյութ և
կարող ե վարակման պատճառ լինել։ Փակ շինություն մտնե-
լիս այդ տեսակ հազուստը նախապես պետք ե հանել։ Առան-
ձին զգուշությամբ պետք ե վերաբերվել այն հագուստներին,
վորոնք ունեն իրենց մեջ մնայուն թունավորող նյութ (իպրիտ)
և թույլ չտալ հագնել այն, մինչև վոր ապագազացման
(дегазация) չենթարկվի։

9. Հագուստի ապագազացումը կատարվում ե դա յեռացնե-
լով ջրի մեջ մի ժամ և կամ մաք-
րելով առանձին սենյակում (камера),
վորտեղ տանում են այդ հագուստը
ովֆով շաղախած բրեգենտի հատուկ
պարկերում կամ մետաղյա արկղում,
վոր ունի ամուր ծածկող կափարիչ։
Վոտնամանը ապագազացվում ե
դրան խլորային կիր քսելով։

10. Մնայուն թունավորող նյու-
թերից թունավորվածներին հաս-
ցըած առաջին ոգնությունից անկախ,
վարակված մթնոլորտում գտնվող
բոլոր մարդիկ իսկույն պետք ե հա-
նեն հագուստը և լավ լվացվեն տաք



Նկ. 38



Նկ. 39


ջրով և սապոնով։ Ամենից հարմար ե այդ տեսակ լվացման համար ոգտվել լողարանային ցնցուղով (դյուշ)։ Մանավանդ խնամքով պետք ե լվանալ մաչալկայով կռնատակերը և աճունքը (պահ) (նկ. 38)։

11. Թունավորող նյութերը աչքերի վրա աղդելիս պետք ե լվանալ աչքերը սոդայի թույլ ($2^{\circ}/_{\circ}$) շաղախով։ Նույն լուծվածքով պետք ե մի քանի անգամ ($15 - 20$) վողողել բերանը և կռկորդը։ Ցանկալի յելրացնել այդ վողողումը՝ ներս շնչելով $3 - 5$ րոպեյի ընթացքում սոդայի 2% լուծվածքի գոլորշին, վորին ավելացնում են $2 - 3$ կաթիլ մյատայի յուղ կամ մենտոլի բյուրեղ։

Ներս շնչելով $3 - 5$ րոպեյի ընթացքում սոդայի 2% լուծվածքի գոլորշին, վորին ավելացնում են $2 - 3$ կաթիլ մյատայի յուղ կամ մենտոլի բյուրեղ։

Գոլորշու ներշնչելը հարմար ե կատարել առանձին գործիքով, վոր կոչվում ե ի ն գ ա լ յ ա տ ո ր (նկ. 39)։

12. Հեղձուցիչ նյութերից մնասվածները բացի հանգստությունից կարիք են զգում նաև տաքանալու ներշնչելու թթվածին, վորը սովորաբար տալիս են նրանց թթվածինի բարձիկներից՝ յուրաքանչյուր 5—8 րոպեն մի անգամ 2—3 րոպեյով (նկ. 40)։



Նկ. 40

Բ ՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

13. Տաքացնում են հեղձուցիչ թունավորող նյութերից վարակվածներին, նրանց փաթաթելով տաք վերմակների մեջ, տեղավորելով ողը մաքրած տաք սենյակներում և շրջապատելով տաք ջրով լցրած շներով և ռեզինի պարկով:

14. Զի կարելի թուլատրել ոգտվելու թունավորված մթնոլորտում գտնված ջրից, պարենից և կերակրից: Այն բոլոր առարկաները, վորոնց վրա ընկել ե մնայուն թունավորող նյութ, պետք ե յենթարկվեն ապագազացման. մետաղյա իրերը լվացվեն կերոսինով, իսկ մյուսները — խլորային կիրով: Թունավորված պտրենը և առարկաները, վորոնց անհնար ե ապագացման յենթարկել, պետք ե վոչնչացվեն:

15. Ոգնություն հասցնելով մնասվածներին, պետք ե միջոցներ ձեռք առնել թույլ չտալու հակադագային դիմակ ու հատուկ զգեստ չունեցողներին ներս մտնել թունավորված շինությունը և մնայուն թունավորող նյութերով վողողված տեղերը,

Հիմնական կանոնները, վոր պետք ե կատարել առաջին ողնություն հասցնելիս	3
Արյունհոսություն թշից կամ շըր- թունքից	5
Արյունհոսություն քթից	6
Արյունհոսություն կանատակից և անրակի տակից	7
Արյունհոսություն մեջքից կամ կրծքից	8
Արյունհոսություն ձեռքի դաստակից	9
Արյունհոսություն նախաբազուկից	10
Արյունհոսություն ուսից	12
Արյունհոսություն կրունկից կամ փոտատակից	13
Արյունհոսություն սրունքից . . .	13
Արյունհոսություն տղղրից	15
Արյունհոսություն ականջից . . .	17
Վոսկորների կոտրվելը	19

Ոգնություն նախաբազուկը կոտր- վելու դեպքում	19
Ոգնություն ուսու չարդվելու դեպ- քում	22
Սըռնքի ջարդվածքը	23
Աղբը ջարդվածքը	25
Ներքեի ծնոտի ջարդվածքը . . .	28
Անրակի ջարդվածքը	29
Կողերի ջարդվածքը	32
Վոսկորը դուրս ընկնելու նշանները	32
Առաջին ոգնություն վոսկորը դուրս ընկնելու դեպքում	32
Վնասվածի տեղափոխությունը . .	33
Ինչպես պետք ե բարձրացնել հի- գանդին և տեղավորել պատղա- րակի վրա և ինչպես պատղար- ակից տեղափոխել մահճակալի վրա	33
Պատղարակի վրա տանելու յեղանակը	34

	Եջ
Վնասվածին տանելու ուրիշ յեղա-	
նակներ	35
Մահվան նշանները	38
Ոգնություն՝ կարծեցյալ՝ մահվան	
դեպքում	39
Արհեստական շնչառության առաջին	
ձեր (ըստ Սիլվեստրի)	41
Արհեստական շնչառության յերկ-	
րորդ ձեր (ըստ Շեֆֆերի)	44
Ոգնություն ուշագնացության դեպ-	
քում	48
Ոգնություն ուզարով բռնվելու դեպ-	
քում	48
Ոգնություն խեղդվողին	50
Ոգնություն ջրից հանածին	53
Ոգնություն սառածին	54
Արեգակային ու ջերմության հար-	
փած	55
Ոգնություն կախվելու դեպքում .	56

	Եջ
Եպիլեպսիա (ընկնավորություն) .	56
Առաջին ոգնությունը ելեքտրակա-	
նությունից մասսվելու դեպքում	58
ԱՅՐՎԱԾՔՆԵՐ	
Ոգնություն այրվածք ստացածին .	61
Ոգնություն այրվածքների դեպքում	62
Աչքերի այրվածքը	63
Ոգնություն սառուցից ճեղքվածքից	
ջրի մեջ ընկնողին	64
Ոգնություն ալկոհոլից թունավոր-	
վելու դեպքում	64
Ոգնություն սունկից թունավորվե-	
լու դեպքում	66
Կատաղած կենդանիների կծելու	
դեպքում	66
Մեղվի խայթոցը	67
Ոձի խայթոցը	67
Առաջին ոգնությունը թունավորող	
նյութերից մասսվելու դեպքում .	68

Մոտակա բժշկի կամ բուժակի հասցեն

Մոտակա հիվանդանոցի հասցեն

Մոտակա ամբուլատորիայի հասցեն

ՊԱՀԱՆՁԵՑ
ՄԵՐ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ, ՎԱՐ
ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ԶԲԻ
ԴԻՄԵԼ Մոսկվա, Никольская, 10.
ЦЕНТРИЗДАТ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0275962

20 чпм.

Цена 2

3906



ПЕРВАЯ ПОМОЩЬ
в несчастных случаях
и при поражениях ОВ

(На армянском языке)

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10.